ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՈՍՅԱՆ
պատմական գիտ. դոկտոր

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑԻՆ ԵՒ ՆՐԱ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐԸ ՄԻ ՔԱՆԻ ՎԱՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայ մատենագրության ԺԲ. դարի նշանավոր երկերից է Անիի Կաթողիկե եկեղեցու ավագերեց Սամվել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ» Ժամանակագրությունը[1], որը սկսվում է Ադամից եւ հասնում մինչեւ 1163 թ.: Չնայած ժամանակագրական այդքան մեծ ընդգրկմանը, երկը գրված է սեղմ, եւ պատահական չէ, որ միջնադարում բազմաթիվ ընդօրինակություններ է ունեցել, որոնցից մեզ է հասել յոթանասունը:

1818 թ. լատիներեն թարգմանությամբ, 1876 թ. ֆրանսերենով եւ 1893 թ. Վաղարշապատում իրականացված հայերեն առաջին հրատարակությամբ[2] գիտական աշխարհին հայտնի այս երկի առանձնահատկություններից մեկն այն է, որ գրված լինելով ժամանակագրական աղյուսակների եղանակով, հետագայում ենթարկվել է բազմաթիվ հավելումների ու լրացումների, շարունակվել է տարբեր հեղինակների կողմից: Դարերի ընթացքում նոր ընդօրինակությունների հետ ընդմիջարկությունների ու լրացումների թիվն այնքան է մեծացել, որ ծավալով գրեթե հավասարվել է Սամվել Անեցու բուն Ժամանակագրությանը: Քանի որ նախկինում Ժամանակագրության ձեռագրերն առանձին ուսումնասիրության չեն ենթարկվել, հեղինակային բուն շարադրանքի եւ հետագայի հավելումների սահմանները մնացել են անորոշ, ինչն առկա է նաեւ ուշ շրջանի ձեռագրերի հիման վրա կատարված վերը նշված բոլոր հրատարակություններում:

Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերի վերջին տարիներին կատարված ուսումնասիրության շնորհիվ[3] պարզվեցին երկի հնագույն ընդօրինակությունները, որոնց միջոցով Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանը 2011 թ. իրականացրեց Ժամանա-

---

1 Երկի երկարաշունչ վերնագիրը չկրկնելու համար այն այսուհետեւ անվանում ենք Ժամանակագրություն (որպես հատուկ անուն): Վերնագրի աշխարհաբարը՝ «Պատմագիրների գրքերից հավաքված, անցած ժամանակների մասին գտնվածը՝ մինչեւ ներկան, ընդրողաբար քաղված»:

2 «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ», յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893 (այսուհետեւ՝ **Անեցի**, 1893): Այս հրատարակության համար օգտագործվել է Էջմիածնի մատենադարանի 13 ձեռագիր, հնագույնը՝ ԺԳ դարի (Մատենադարան, ձեռ. թիվ 1898), մյուսները՝ ԺԶ-ԺԸ. դարերի մատյաններ:

3 Տե՛ս **Կ. Մաթեւոսյան**, Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, Երեւան, 2009, էջ 5-98:

կագրության համեմատական բնագրի հրատարակությունը[4]: Օգտագործված ԺԲ. դարի երեք ձեռագրերը եւ հին նախօրինակից ծագող ԺԷ. դարի մի մատյան, հնարավորություն տվեցին վերականգնելու Ժամանակագրության հեղինակային բնագիրը եւ այն հստակորեն տարանջատելու հետագայի ընդմիջարկություններից ու հավելումներից: Այս հրատարակության մեջ պահպանվել է նաեւ բնագրի աղյուսակային ձեւը, որը թույլ է տալիս պատմական դեպքերը տեսնել ժամանակագրական տարբեր համակարգերում: Ցավոք, 1893 թ. հրատարակության մեջ աղյուսակները համարվել են օգտակարությունից զուրկ, եւ դուրս են թողնվել[5]: Աղյուսակների հանվելուց հետո թողնվել է հիմնականում Փրկչական թվականը, հազվադեպ նաեւ Հայոց թվականը, հանգամանք, որը վնասել է բուն Ժամանակագրությանը, քանի որ տարբեր դեպքերի թվականներն ավելի ստույգ են հենց Հայոց թվականով: Իսկ Ժամանակագրության մեջ Փրկչական թվականի վերաբերյալ ժամանակին կատարված կարեւոր ճշտումը, ցավոք, ծանոթ չի եղել ուսումնասիրողներից շատերին, եւ նրանք, Սամվել Անեցու Ժամանակագրությունից տվյալներ վերցնելով, փաստորեն, երբեմն ներկայացրել են ոչ ստույգ թվականներ:

Սամվել Անեցու Ժամանակագրությունը շարունակած Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության՝ Ա. Գ. Աբրահամյանի կատարած հրատարակության առիթով գրված գրախոսականում Լ. Խաչիկյանը եւ Վ. Հակոբյանը նշում են. «Սամուել Անեցին հետեւել է այն տոմարագետներին, որոնք Քրիստոսի ծննդյան տարեթիվը դրել են այժմ գործող թվականից 2 տարի առաջ, ուստի Սամուելի, ինչպես եւ Ստեփանոսի ժամանակագրության մեջ, ամենուրեք, քրիստոնեական եւ հայկական թվականների տարբերությունը ոչ թե 551, այլ 553 տարի է»[6]:

Նշված երկու տարվա տարբերության պատճառով ուսումնասիրողները երբեմն որոշ թերահավատությամբ են վերաբերվել Սամվել Անեցու հայտնած տեղեկությունների թվագրմանը, քանի որ 1893 թ. հրատարակության մեջ տեղ գտած թվականները հաճախ տարբերվում են որեւէ դեպքի վերաբերյալ այլ աղբյուրներից հայտնի, ճշտված թվագրությունից: Այս եւ այլ պատճառներով նշված հրատարակության մեջ թվագրման շեղումներ կան նաեւ որոշ վանքերի հիմնադրման ժամանակի վերաբերյալ, ինչի սրբագրմանն ու մի քանի նոր տվյալների հրապարակմանն է նվիրված սույն հոդվածը:

ԲԱԳՆԱՅՐ ԵՒ ԽԾԿՈՆՔ. Անիի շրջանում գտնվող այս վանքերի կառուցման մասին

---

4 Տե՛ս **Սամուէլ Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, բնագիրը պատրաստեց՝ Ա. Հայրապետյան, Երեւան, 2011 (այսուհետեւ՝ **Անեցի**, 2011):

5 **Անեցի**, 1893, էջ ԻԵ-ԻԷ: Ժամանակագրության լատիներեն եւ ֆրանսերեն թարգմանությունները հրատարակվել են աղյուսակներով:

6 **Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան**, Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները, ՀՍՍՌ ԳԱ հասարակական բաժանմունքի Տեղեկագիր, 1949, թիվ 2, էջ 82: Այս դիտողությունն ընդունել է Ա. Աբրահամյանը, որն իր հաջորդ գրքում նշում է. «Միջնադարյան հայ մատենագրության մեջ գործող քրիստոնեական թվականն այն թվականը չէ, ինչ որ գործ ենք ածում մենք ներկայումս, այլ քրիստոնեական այսպես կոչված հայկական հաշվումների թվականը, որը երկու տարով ավելի է, քան մեր ներկայումս գործածած թվականը, այլ խոսքով ասած, ըստ հայկական հաշվարկների, Քրիստոսի ծնունդը եղած պետք է լինի մեր ներկա թվականից 2 տարի առաջ»: **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երեւան, 1956, էջ 300, տե՛ս նաեւ **Բ. Թումանյան**, Տոմարի պատմություն, Երեւան, 1972, էջ 132:

հայտնող առաջին հեղինակը Սամվել Անեցին է[7], որի տեղեկությունները բազմիցս հրատարակվել են: Սմբատ Մագիստրոսի հովանավորությամբ Բագնայրի կառուցման մասին տեղեկությունը 1893 թ. հրատարակության մեջ դրված է միայն Քրիստոսական թվականով՝ ՌԺԲ (1012)[8]: Այդպես էլ այն տեղ է գտել ինչպես մասնագիտական, այնպես էլ գիտահանրամատչելի գրականության մեջ[9]: Մինչդեռ Ժամանակագրության այդ տեղեկությունը («Սմբատ Մագիստրոս շինեաց զհերշտակաբնակ եւ զփափագատենչ վանքն, որ Բագնայր յորջորջի, ժողովէ տղարանց Աստուածայնոց») Հայոց թվականով ՆԾԹ՝ 1010-ի դիմաց է գրված[10]: Այդպես են իրողությունն ընդունել նաեւ միջնադարյան հեղինակները: Սամվել Անեցուց օգտվելով՝ Բագնայրի վանքի կառուցման մասին հայտնում է Հովհաննես Սարկավագի Ժամանակագրության շարունակողը, նշելով «ՆԾԹ» թվականը[11], իսկ պատմիչ Մխիթար Այրիվանեցին վանքի կառուցումը դնում է 1010 թվականով ավարտվող տասնամյակի մեջ, որպես վերջին տեղեկություն[12]: Բագնայրի վանքի առաջին հետազոտող եւ 1864 թվականին վիմագրերը հրատարակած Ներսես Սարգիսյանը, որն օգտվել է Սամվել Անեցու երկի ձեռագրերից, վանքի հիմնադրման ժամանակի մասին գրում է, որ այն «երաշխաւորեալ է մեզ ի Սամուէլէ՝ ի ՆԾԹ (1010) թուականիս»[13]:

Խծկոնքն ունեցել է ԺԱ. դարից ավելի վաղ կառուցված եկեղեցի, բայց հավանորեն վանք է դարձել Վեստ Սարգիս իշխանի կողմից Ս. Սարգիս եկեղեցու կառուցումից հետո: Սամվել Անեցին այս մասին գրում է. «Մեծապատիւ Վեստն Սարգիս, զկնի բազում շինուածոց, բերդից եւ եկեղեցեաց, զհրաշալի վանքն զխցկունս շինեաց, պայծառ պսակաւ զարդարեալ սուրբ քաւարանաւն, որ ճանաչի անուն Սուրբ Սարգիս»: Տեղեկությունը ժամանակագրական աղյուսակում Քրիստոսական ՌԻԶ (1026) եւ Հայոց ՆՀԳ (1024) թվականի դիմաց է[14]: Իսկ ահա 1893 թ. հրատարակության մեջ նշված է միայն Քրիստոսական թվականը, ընդ որում ավելի առաջ տեղաշարժված՝ «ՌԻԹ» (1029)[15]: Այդպես էլ 1029 թվականը շրջանառություն է գտել որպես Խծկոնքի կառուցման մասին «Սամվել Անեցու վկայություն»[16]: Մուրադ Հասրաթյանը Հայոց թվականի կիրառման դեպքում երկու տարվա տարբերության հանգամանքը նկարի ունենալով Ս. Սարգիս եկեղեցու կառուցումը «ըստ Սամվել Անեցի պատմիչի հի-

7 Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն իր Պատմությունն ավարտել է 1004 թ., բայց նրա երկի մեջ Բագնայրի կառուցման մասին ընդմիջարկություն է կատարել ԺԳ. դարում հավանաբար Շիրակում ապրած Յոհան գրիչը: Տե՛ս **Կ. Մաթեւոսյան,** Յոհան գրչի ընդօրինակած պատմական ժողովածուն եւ կատարած հավելումները. «Էջմիածին», 2008, Զ-Է, էջ 102-112:

8 **Անեցի**, 1893, էջ 105:

9 Տե՛ս **Վ. Հարությունյան,** Հայկական ճարտարապետության պատմություն, Երեւան, 1992, էջ 239, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 2, Երեւան, 1976, էջ 198 (այսուհետեւ՝ ՀՍՀ), նույնը կրկնված է Հայկական Համառոտ եւ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարաններում:

10 Տե՛ս **Անեցի**, 2011, էջ 122:

11 Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», 13-18-րդ դդ., հ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1951, էջ 25:

12 Տե՛ս «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», Մոսկուա, 1860, էջ 57:

13 **Ն. Սարգիսեան**, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 178: Նույն թվականն է գրում Սամվել Անեցու ձեռագրերից օգտված Ղ. Ալիշանը (**Ղ. Ալիշան**, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 111): Վանքի մասին հանգամանորեն տե՛ս **Կ. Մաթեւոսյան**, Բագնայրի վանքի հազարամյակը. «Էջմիածին», 2010, Բ, էջ 53-76:

14 Տե՛ս **Անեցի**, 2011, էջ 122:

15 Տե՛ս **Անեցի**, 1893, էջ 106:

16 Տե՛ս **Վ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 240:

շատակության» դնում է 1027-ին[17]: Սակայն, ինչպես տեսանք, եկեղեցու կառուցման համար պատմիչը նշել է ավելի վաղ թվական:

Այսպիսով, Սամվել Անեցին Բագնայրի վանքի կառուցումը նշում է 1010, իսկ Խծկոնքի վանքի գլխավոր՝ Ս. Սարգիս եկեղեցու կառուցումը՝ 1024 թվականին[18]:

ՄԱՐՄԱՇԵՆ. Բագրատունյաց Անիի վերջին զորավարի՝ Վահրամ սպարապետի կառուցած Մարմաշենի վանքի գլխավոր եկեղեցու վերաբերյալ Սամվել Անեցու հաղորդած տեղեկությունը տարբերվում է ինչպես վերը նշվածներից, այնպես էլ Ժամանակագրության մեջ եղած մյուս շինարարական բնույթի վկայություններից, որոնցում որպես կանոն նշվում է ամբողջական կառուցման մասին («շինեաց, շինուած»): Միակ բացառությունը Անիի Կաթողիկեն է (Մայր տաճարը), որը հիմնադրել է Սմբատ Բ. թագավորը («հիմնարկեաց զկաթուղիկէն...»), իսկ կառուցումն ավարտել է նրա եղբոր՝ Գագիկ Ա-ի կինը՝ Կատրամիդե թագուհին («Կաթողիկէն... գլխաւորեցաւ... արդեամբք Կատրամիդեայ թագուհւոյ»)[19]: Մարմաշենի դեպքում Սամվել Անեցին նշում է միայն շինարարության սկզբի մասին. «**Սկիզբն շինուածոյ** մեծանուն եւ վայելչաշէն զարմանակերտ եւ հոյակապ ուխտին Մարմաշինոյ ի քրիստոսասէր իշխանաց իշխանէն Վահրամայ»[20]: Տեղեկությունը Փրկչական ՋՁԹ (989) եւ Հայոց ՆԼԶ (987) թվականի դիմաց է, իսկ 1893 թ. հրատարակության մեջ նշված է Փրկչական ՋՁԸ (988) թվականը[21]:

Այն հանգամանքը, որ Սամվել Անեցին չի նշել շինարարության ավարտի մասին, գրավել է նաեւ Ժամանակագրության հետագա ընդօրինակողների ուշադրությունը եւ նրանցից ոմանք պատմիչի նախադասությունը շարունակել են հետեւյալ կերպ՝ «**սկսեալ ի ՆԼԵ** (986) **թուին եւ ավարտեալ ի ՆԽԳ** (994)**-ին**», իսկ մի քանի ձեռագրերում ավելացված է՝ «**որ լինի Ը** (8) **ամ**»[22]: Մարմաշենի վանքի Կաթողիկե եկեղեցու շինարարական ընդարձակ արձանագրության մեջ նշված է շինարարության սկզբի թվականը. «...սկսեալ ի ՆԼԷ (988) թուականին Հայոց»[23], որն, ըստ էության ներդաշնակ է Սամվել Անեցու եւ նրա շարունակողների հայտնած թվականներին: Սակայն հիշյալ արձանագրության մեջ անսովոր է թվում շինարարության ավարտի համար նշված 1029 թվականը (որով շինարարության տեւողությունը կազմում է 41 տարի):

Հովսեփ Օրբելին Մարմաշենի այս արձանագրությունը, հնագրական հանգամանքներ նկատի ունենալով, համարել է ԺԳ. դարի սկզբին եկեղեցու նորոգման ժամանակ կատարված ընդօրինակություն[24]: Վիմագրագիտական այս հարցի քննությունը դուրս է մեր նպատակից, սակայն արձանագրության բովանդակության վերաբերյալ անհրաժեշտ ենք հա-

17 ՀՍՀ, հ. 5, Երեւան, 1979, էջ 55, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 435:

18 **Անեցի**, 2011, էջ 122:

19 Տես անդ, էջ 120-121:

20Անդ, էջ 120: Այս եւ հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են - Կ. Մ:

21 Տես **Անեցի**, 1893, էջ 103:

22 Անդ:

23 Արձանագրությունն ունեցել է բազմաթիվ հրատարակություններ, տես **Ա. Մխիթարեանց**, Տեղագրութիւն Մարմաշինոյ վանացն ի Ծիրակ, Վաղարշապատ, 1870, էջ 9-11, «Հուշարձան» տարեգիրք Բ, Երեւան, 1993, էջ 160-161, **Մ. Սաղումյան**, Մարմաշենի վանքը, Ս. Էջմիածին, 1998, էջ 12 եւ այլն:

24 Տես «Դիվան հայ վիմագրության», պր. Ա, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երեւան, 1966, էջ Ժ:

մարում որոշ նկատառումներ նշել: Առաջին փարօրինակությունն այն է, որ այստեղ բացակայում է ժամանակի Կաթողիկոսի անունը, որը Պետրոս Ա. Գետադարձն էր (1019-1054)[25]: Հաջորդը՝ որ Վահրամն իրեն անվանում է «ի ցեղէ Պահլաւունի եւ ի զարմից Սրբոյն Գրիգորի՝ Հայոց Լուսաւորչի...»: Հարկ է նշել, որ ո՛չ նա ու նրա եղբայրները, ո՛չ որդիներն իրենց բազմաթիվ արձանագրություններում տոհմանուն չեն հիշատակում, իսկ Գրիգոր Լուսավորչի զարմից լինելու մասին պնդումը տվյալ ժամանակի (1029 թ.) համար կարելի է պարզապես արտառոց համարել, քանի որ այն բացահայտ հավակնություն է պարունակում կաթողիկոսական Աթոռի նկատմամբ: Միայն Վահրամի եղբոր՝ Վասակի որդի Գրիգոր Բջնեցին է, որը 1045 թ. Բջնին Բյուզանդիային հանձնելուց, կայսրից մագիստրոսության պատիվ ու կուսակալի պաշտոն ստանալուց հետո, անթաքույց խոսում է իր «Պահլավունի» ծագման, իսկ որդուն՝ Վահրամին (ապագա Գրիգոր Բ. Վկայասեր Կաթողիկոս) գրած մի նամակում հայտնում է իրենց՝ Լուսավորչի տոհմից սերած լինելու մասին[26]:

Մարմաշենի արձանագրության խնդրահարույց կետերից է այն հատվածը, որտեղ Վահրամն ասես կռահում է իր վախճանը: Հայտնի է, որ նա իր Գրիգոր որդու հետ նահատակվեց 1045 թ. աշնանը, երբ հայկական զորաջոկատով մասնակցում էր բյուզանդացիների՝ Դվինի ամիրայի դեմ ձեռնարկած ճախողված արշավանքին: Իսկ արձանագրության մեջ կարդում ենք. «որք էաք ամենայն տամբ եւ տոհմիւ հաւատարիմք տերանց մերոց եւ **նահատակեալ ի վերայ Տանս Հայոց աշխատութեամբ եւ արեամբ մեր եւ որդոց մերոց**...»:

Արձանագրության մեջ կառուցողն ասում է. «շինեցաք եւ այլ բազում եկեղեցիս եւ վանորայս, բայց **զտեղի հանգստեանս մերոյ** առաւել պատուով մեծացուցաք», այսինքն սա Վահրամի տան հանգստարան-դամբարանավայրն էր: Դա նկատի ունենալով անհասկանալի է մնում, թե ինչու է արձանագրության մեջ բացակայում Վահրամի, այդ ժամանակ արդեն հանգուցյալ կնոջ անունը, եւ, որ ավելի տարօրինակ է՝ չեն տրվում նրա երկու որդիների՝ Գրիգորի եւ Ապուղամրի անունները[27]:

Արձանագրության մեջ կան նաեւ տարակուսելի այլ կետեր, ինչպես օրինակ վանքին տրված նվիրատվությունների շարքում «ի յԱնի տներ եւ կուղպակաւի» որոշակիությունից զուրկ ձեւակերպումը, որը հատուկ չէ այսօրինակ արձանագրություններին, որոնցում որպես կանոն նշվում է տների ու կուղպակների ստույգ տեղը, անունը կամ փողոցը: Իհարկե, այս ամենը կարելի է բացատրել ու մեկնաբանել տարբեր կերպ, սակայն մեզ թվում է, որ արձանագրության սկզբնական տեքստը միջամտության է ենթարկվել եւ թելերը կարծես տա-

25 1045-ին Անին գրավելուց եւ Բագրատունյաց թագավորությունը վերացնելուց հետո բյուզանդացիները 1046 թվականի սկզբին քաղաքից հեռացրեցին նաեւ Պետրոս Կաթողիկոսին (Կոստանդնուպոլիս ապա Սեբաստիա) եւ իրենց 19-ամյա տիրապետության ընթացքում երբեք չթույլատրեցին Հայոց Կաթողիկոսի (նաեւ Պետրոսի հաջորդների) մուտքը բուն Հայաստանի տարածք: Հայ Եկեղեցու դեմ հալածանք սկսելով նրանք նաեւ գրաքննություն սահմանեցին, որի հետեւանքով այդ շրջանում գրված վիմագրերում իսպառ բացակայում է Հայոց Կաթողիկոսի անվան հիշատակությունը (Տե՛ս **Կ. Մաթեւոսյան**, Անի, Ս. Էջմիածին, էջ 41-47, 192-194, **նույնի,** Անի-Շիրակի պատմության էջեր, Երեւան, 2010, էջ 21-45):

26 Տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի թղթերը» (աշխատասիրությամբ՝ Կ. Կոստանեանցի), Աղեքսանդրապոլ, 1910, էջ 236:

27 Ուսումնասիրողները ենթադրել են, որ Վահրամ Պահլավունու ավագ որդին եղել է Սմբատ Մագիստրոսը, սակայն դա շփոթմունք է: Այս մասին տե՛ս **Կ. Մաթեւոսյան**, Սմբատ Մագիստրոս. «Հանդէս ամսօրեայ», 2008, էջ 173-186, **նույնի**՝ Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 59-66:

նում են դեպի Գրիգոր Մագիստրոսի վերելքի տարիները՝ 1045-1054 թվականները, երբ նա Տարոնի եւ Հայոց Միջագետքի բյուզանդական կուսակալն էր[28]: Հենց այդ ժամանակ Մագիստրոսը Կոստանդին Մոնոմախ կայսրից խնդրել ու ստացել է ոսկե կնիքով հրովարտակ Մարմաշենի վանքին առանձնաշնորհումներ տալու մասին եւ նամակ գրել վանահայր Սոսթենեսին (որի անունը հիշվում է նաեւ արձանագրության մեջ)[29], որպեսզի նա գա իր մոտ եւ ստանա այդ հրովարտակը[30]: Այստեղ տեղին է հիշել, որ արձանագրության մեջ Վահրամն առաջին եւ միակ անգամ հիշատակվում է իր բյուզանդական տիտղոսով՝ «Ես Վահրամ՝ իշխանաց իշխան եւ **անթիպատ պատրիկ**», որը հետագայում այլեւս երբեք չի նշվում ո՛չ նրա, եւ ո՛չ նրա մերձավորների կողմից: Սա ակամա մտածել է տալիս, որ թերեւս այդ տիտղոսը նշվել է հենց կայսերական հրովարտակի հիմնավորման համար[31]:

Ինչեւէ, հնարավոր է, որ արձանագրության, անգամ մեր ժամանակներում նկատելի տարօրինակություններն են պատճառ դարձել, որպեսզի Սամվել Անեցին հիշատակի միայն Մարմաշենի վանքի շինարարության սկզբի թվականը: Դժվար է կասկածել, որ Անիում բնակվող պատմիչն անձամբ եղել է Մարմաշենում, տեսել արձանագրությունը: Բայց եթե շինարարության սկզբի՝ հիմնադրման մասին նշումը հավաստի է համարել, ապա հավանաբար կասկած է ունեցել 1029 թվականի հարցում:

ՀԱՂԲԱՏ ԵՒ ՍԱՆԱՀԻՆ. Աշոտ Գ. Ողորմած (953-977) թագավորի եւ նրա կնոջ՝ Խոսրովանույշ թագուհու հովանավորությամբ հիմնված այս վանքերի կառուցման մասին Սամվել Անեցին ոչինչ չի գրել (դա երեւում է երկի հնագույն ձեռագրերից), սակայն այդ մասին Ժամանակագրության տարբեր ձեռագրերում, տարբեր հավելումներ են կատարվել: 1893 թ. հրատարակության մեջ տեղ է գտել ԺԷ. դարի մի ձեռագրից քաղված (Մատենադարան, ձեռ. թիվ 1899) այդ հավելումներից մեկը, որն ուսումնասիրողներն անվերապահորեն համարել են Սամվել Անեցու գրածը: Այն հետեւյալն է. «**Ի ՆԺԶ** (967) **թվին շինեցաւ Հաղբաղ, եւ Սանահինն Ժ** (10) **ամաւ առաջ քան զՀաղբատ շինեցաւ** ի Խոսրովանուշ թագու-

28 Այդ շրջանում Գրիգոր Մագիստրոսի վայելած հեղինակությունն այնքան մեծ է եղել, որ ժամանակակիցների մոտ տպավորություն է ստեղծվել, թե բյուզանդական կայսրը Հայոց թագավորության վերացումից հետո երկրում իշխանությունը նրան է հանձնել: Այս մտայնությունն իր ուղղակի արտահայտությունն է գտել Մխիթար Այրիվանեցու ժամանակագրության մեջ, որտեղ կարդում ենք. «Իսկ Մոմոմախն, որ կալաւ զԳագիկ (Գագիկ Բ. 1043-1045 թթ. - Կ. Մ.) եւ իշխանութիւն երկրիս Գրիգորոյ Մագիստրոսի» («Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», էջ 58):

29 «...Կանգնեցաք ի ձեռն սուրբ հաւր Երեմիայի եւ որ զկնի յաջորդեցաւ Սոսթենէս, եղբին որդիացեալ»: Զաքարիա Քանաքեռցին (ԺԷ. դ.) իր երկում մեջ է բերել Երեմիայի՝ Հովհաննավանքում եղած տապանաքարի տեքստը, ըստ որի նա մահացել է 1033 թ.՝ «ՆՁԲ (1033) թուին, ես՝Երեմիա, առաջնորդ սուրբ ուխտին Մարմաշինու, սիրեցի զվարս միայնութեան, աւանդեցի զվերակացութիւն ուխտին իմոյ անդրանկին իմում Սոսթենէսի եւ եկեալ բնակեցայ յանապատի աստ եւ ի տեղւոջն ընկալայ զփոխումն, արդ աղաչեմ յիշեսջիք ի Քրիստոս» («Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն», հ. Գ, Վաղարշապատ: 1870, էջ 10-11): Երեմիան Հովհաննավանք է եկել մահից որոշ ժամանակ առաջ: Երկու արձանագրությունից դատելով կարելի է ենթադրել, որ Սոսթենեսը Երեմիայի որդեգիրն է եղել:

30 Տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 103-104, 304: Գրիգոր Մագիստրոսից հայտնի է Սոսթենեսին գրված երկու նամակ (ԽԳ, ԽԴ):

31 Հնարավոր է, որ Մարմաշենի արձանագրության պարունակած հարցականներն ինչ-որ կերպ առնչություն ունեն Գրիգոր Մագիստրոսի անվան հետ կապված երկու այլ՝ Կեչառիսի ու Հավուց թառի առեղծվածային արձանագրությունների հետ, եւ որ ԺԱ. դարի վիմագրական այս թնջուկը գուցե լուծում ստանա արձանագրությունների միասնական քննության դեպքում:

հոյն՝ ի կնոջէ Աշոտոյ Շահնշահի»[32]: Հաղբատի հիմնադրման հարցը հանգամանորեն քննած Կ. Ղաֆադարյանը գրում է. «Պետք է առանց վերապահության ընդունենք նաև Սամուել Անեցու՝ Հաղբատի հիմնադրման վերաբերյալ հիշատակած թվականը, 10 տարի Սանահինի հիմնադրումից հետո, այսինքն՝ 976/977 թվականին»[33]: Հենց 976-ն էլ, որպես Հաղբատի հիմնադրման թվական, լայն տարածում է գտել[34]:

Հաղբատի եւ Սանահինի կառուցման մասին Ժամանակագրության տարբեր ձեռագրերում կատարված ընդմիջարկություններն ըստ բովանդակության կարելի է երեք խմբի բաժանել: Մեկում, որին արդեն ծանոթացանք, եւ որը ժամանակով ուշ շրջանի ծնունդ է, ասվում է, թե Սանահինը 10 տարով ավելի վաղ է կառուցվել: Մյուսում, որը գրվել է ԺԳ. դարում, կառուցման ժամանակային առաջնության խնդիրը չի շոշափվում: Եւ վերջապես երրորդում, որը պահպանվել է ամենից վաղ օրինակներում (ԺԲ-ԺԳ. դդ.) նշվում է, որ Սանահինն է կառուցվել Հաղբատից 10 տարի հետո:

Ծանոթանանք միջանկյալ տեղեկությանը, որը պատկանում է ԺԳ. դարում ապրած Հայրապետ վարդապետին (Մատենադարան, ձեռ. թիվ 1897). «Շինեաց ի Սեւորդիսն զհրաշալի զուիտսն զՀաղբատ եւ զՍանահինն կինն Աշոտայ Ողորմածին՝ Խոսրովանուշ, վասն արեւշատութեան որդւոց իւրոց Գուրգենայ, Սմբատայ եւ Գագկայ ՆԺԵ (966) թվին»[35]:

Եւ վերջապես, ամենահին ընդմիջարկյալ տեղեկությունը պահպանվել է այն օրինակում, որն ավարտվել է 1193 թվականով եւ որը Ստեփանոս Օրբելյանը շարունակել ու հասցրել է մինչեւ 1290 թվականը[36]: Այստեղ վանքերի հիմնադրման մասին ասվում է. «**Ի ՆԺԷ** (968) **թուին շինեցաւ Հաղբատ ի Խոսրովանոյշ թագուհոյ, կնոջէ Աշոտոյ Շահանշահի, եւ ապա զկնի Ժ** (10) **ամի՝ Սանահինն**»[37]: Քանի որ Ստեփանոս Օրբելյանի օրինակի պահպանված ձեռագիրը ԺԵ. դարից է (Մատենադարան, ձեռ. թիվ 8481), կարելի էր կասկածել, որ նշված տեղեկությունը գրված է եղել մինչեւ 1193 թվականը (այսինքն, որ գուցե այն ավելացրել է հենց Ստեփանոս Օրբելյանը կամ նրանից հետո մեկ ուրիշը): Սակայն բոլորովին վերջերս առիթ ունեցանք ծանոթանալու Սամվել Անեցու Ժամանակագրության Վենետիկի Մխիթարյանների մոտ պահվող 1206 թվականին գրված հնագույն օրինակին, որտեղ հիշյալ տեղեկությունը կրկնվում է: Ձեռագրում Հովհաննես գրիչը Հայոց ՆԺԷ. (968) թվականի դիմաց գրում է. «**Յայսմ ամի շինեցաւ Հաղբատ եւ Սանահինն, Ժ** (10) **ամաւ յառաջ շինեցաւ Հաղբատ** ի Խոսրովանոյշ թագուհոյ, ի կնոջէ Աշոտոյ Շահանշահի» (Վենետիկ, ձեռ. թիվ 511, թերթ 228ա): Այս տեղեկության հավաստիության օգտին խոսող ամենակարեւոր հանգամանքն այն է, որ սույն ձեռագիրն ընդօրինակվել է Սանահինի վանքում:

---

32 **Անեցի,** 1893, էջ 100:

33 **Կ. Ղաֆադարյան**, Հաղբատ, Երեւան, 1963, էջ 13:

34 Տե՛ս **Գ. Շախկյան**, Լոռի. պատմության քարակերտ էջերը, Երեւան, 1986, էջ 96, ՀՍՀ, հ. 6, Երեւան, 1980, էջ 81 (նույնն է հայկական մյուս հանրագիտարաններում), տե՛ս նաեւ ամենավերջին հրատարակությունը՝ «Հաղբատավանք», Ս. Էջմիածին, 2009, էջ 21 եւ այլն:

35 Այս եւ Հայրապետի կատարած մյուս հավելումների մասին տե՛ս **Կ. Մաթեւոսեան**, Սամուել Անեցու Ժամանակագրության Հայրապետ վարդապետի ընդօրինակութիւնը. «Հայկազեան հայագիտական հանդէս», 2007, էջ 77-88:

36 Տե՛ս **Կ. Մաթեւոսյան**, Սամվել Անեցու Ժամանակագրության Ստեփանոս Օրբելյանի օրինակը. ԵՊՀ ասպվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք Բ, Երեւան, 2007, էջ 180-192:

37 «Ժամանակագրութիւն Ստեփանոսի Օրբէլեանի», հրատ. պատրաստեց Ա. Աբրահամյանը, Երեւան, 1942, էջ 11:

Ավելացնենք, որ Սանահինի վանքի ավանդամատյանում (Քյոթուկ) պահպանվել է այս նույն տեղեկությունը ՆԺԵ. (966) թվականի նշումով[38]:

Թե հետագայում ինչպես է վերոնշյալ տեղեկությունը «գլխիվայր շրջվել», կարելի է միայն ենթադրել: Նախ այս վերջին մեջբերումը համեմատելով առաջինի հետ (Մատենադարանի թիվ 1899 ձեռագրի), տեսնում ենք, որ դրանք կառուցվածքով նույնն են, միայն ավելացված է «քան» բառը եւ տեղափոխված «շինեցաւ»-ը, որով էականորեն փոխվել է իմաստը: Իսկ այս «խմբագրման» պատճառը գուցե այն է եղել, որ «Սանահին» անունը ժողովրդական զրույցը մեկնաբանում է իբրեւ «սա նրանից հին է», այսինքն՝ Սանահինը Հաղբատից հին է[39], որն իհարկե, ոչ մի կապ չունի իրական ստուգաբանության հետ: Վերջապես նշենք, որ Սանահինի ավանդամատյանի վկայությամբ եւ մասնագետների համոզմամբ, վանքի Ս. Աստվածածին փոքր եկեղեցին կառուցվել է Աբաս Բագրատունու (929-953) օրոք, մոտավորապես 940-ական թվականներին: Իսկ ավելի ուշ՝ Աշոտ Ողորմածի եւ նրա կնոջ՝ Խոսրովանույշի հովանավորությամբ հիմնվել է վանքի մեծադիր Ս. Ամենափրկիչ եկեղեցին: Փաստորեն, վերը նշված վկայությունները վերաբերում են թագավորական այս զույգի Հաղբատում (Ս. Նշան) եւ Սանահինում (Ս. Ամենափրկիչ) հիմնած կառույցներին, մինչդեռ Սանահինն ունեցել է ավելի վաղ շինված եկեղեցի:

Սույն տեղեկություններն ամփոփելով կարող ենք ասել, որ Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ հավելում կատարողները որպես Հաղբատի կառուցման տարի նշում են 966, 967, 968 թվականները, իսկ Սանահինի կառուցումը դրանից տասը տարի հետո[40]: Հասկանալի է, որ այս քննության նպատակը երկու վանքերի կամ դրանց գլխավոր եկեղեցիների կառուցման ժամանակի առաջնության խնդրի արծրարծումը չէ, այլ զուտ աղբյուրագիտական նյութի մատուցումը:

ՀԱՎՈՒՑ ԹԱՌ ԵՒ ԳԵՏՈՑ ՎԱՆՔ. Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ Հավուց թառի մասին տեղեկություն չկա: Սակայն ժամանակագրության ձեռագրերից մեկը (Մատենադարան, ձեռ. թիվ 3681), որը ԺԴ. դարի կեսերին պատկանել է Հավուց թառի վանահայր Նաթանայել եպիսկոպոսին, հենց նրա ձեռքով հարստացվել է վանքի պատմությանը վերաբերող մի շարք արժեքավոր տեղեկություններով[41]: Մենք կանդրադառնանք միայն վանքի հիմնադրմանը վերաբերող տվյալներին:

Հարկ է նշել, որ Լ. Խաչիկյանը ԺԴ. դարի հիշատակարանների ժողովածուում հրատարակել է մի հիշատակարան, ըստ որի Հավուց թառի հիմնադրումը տեղի է ունեցել 426 թվականին, Սահակ Պարթեւ Կաթողիկոսի (387-436) եւ Մեսրոպ Մաշտոցի կողմից[42]: Այս

38 «Յիշատակարան Սանահնոյ վանից» (Սանահնի քէօթուկը), աշխատասիրութեամբ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 59:

39 Տե՛ս **Գ. Ծախկյան**, նշվ. աշխ., էջ 86-87:

40 Այդ նույն բանը (966 եւ 968 թվականներով) հայտնում են նաեւ երկու այլ ժամանակագրություններ: Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 25, հ. 2, Երեւան, 1956, էջ 501:

41 Նաթանայել Հավուցթառեցու կատարած բոլոր հավելումները տե՛ս **Կ. Մաթեւոսյան,** Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը..., էջ 131-134:

42 «Շինեացաւ սուրբ եւ հռչակաւոր բազմաժողով մեծ մենաբ[ան]ն Հայոց Թ-առ ի սուրբ թարգմանչացն՝ ի Սահակ Հայրապետէ Հայոց եւ ի Մեսրոպ վարդապետէ ԴՃ եւ ԻԳ (426) ամի ծնընդեանն Քրիստոսի, ի թագաւորութեանն Հայոց Վռամշապ[հ]ոյ, ի թագաւորութեան Հռոմոց Արկադէոսի եւ Ոնորիոսի, եւ ի պատրիարգութեան Յոհաննու

տեղեկությունը, եթե ոչ որպես պատմական փաստ (որի վաղեմությունը կարող էր կասկածի տեղիք տալ), ապա գոնե՝ եկեղեցական ավանդություն, տեղ չի գտել վանքի պատմությանը վերաբերող հրապարակումներում, որոնցում այն համարվում է ԺԱ. դարում հիմնված հաստատություն: ԺԴ. դարում Հավուց թառում պահված մի ձեռագրում (հեփազայում այն գտնվել է Սեբաստիայի Ս. Նշան վանքում, այժմ տեղն անհայտ է) Նաթանայել եպիսկոպոսը առանց թվական նշելու հայտնում է վանքի՝ սուրբ թարգմանիչների ձեռամբ հիմնված լինելու մասին, այն նաև Գրիգոր Լուսավորչի աղոթատեղի է կոչում, եւ ավելացնում, որ հեփազայում վանքը վերաշինել է Գեւորգ սպարապետը[43]: Բայց վանքի մասին նա շատ ավելի հանգամանալից տեղեկություններ է մուծել Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ՝ համապատասխան թվականների դիմաց:

Ժամանակագրության ՆԻԳ. (423) թվականի այուսակում Նաթանայելը նախ խոսում է վանքի հիմնադրման եւ անվան նշանակության մասին. «**...[Հայրա]պետն Սահակ եւ Մաշտոց վարդապետն հիմնարկեցին եւ անուանեցաւ աթոռ Հայոց եւ թառ թարգմանութե(անց)** /// [Հաւ]ուց թառ անվանեցաւ»: Ցավոք նախադասության երկրորդ մասի եղծված լինելու պատճառով չենք իմանում, թե հեղինակն ինչպես է «Հայոց թառի» (աթոռ Հայոց եւ թառ թարգմանությանց) մեկնաբանությունից հետո բացատրում նաեւ «Հաւուց թառի» իմաստը: Սակայն առաջ անցնելով ասենք, որ աղբյուրներում վանքի անվան երկու տարբերակն էլ կիրառվել է հավասարապես[44]: Ըստ երեւույթին հեփազայում է «Հայոցը» դարձել «Հաւուց», այս բառի պապ, նախահայր իմաստով («Հաւուց թառ», այսինքն՝ «Պապոնց օթեւան»): Հենց Նաթանայելն ինքը, երբեմն միեւնույն պարբերության մեջ օգտագործում է վանքի երկու անվանաձեւը:

Ժամանակագրական աղյուսակի ՆԻՁ. (426) թվականի դիմաց Նաթանայելը լրացրել է հետեւյալը. «Յայսմ ամի **շինեց սուրբ Հայրապետն Հայոց Սահակ զՍուրբ Կաթողիկէն ի Գառնոյ ձորին ի վերայ գետին** եւ ժողովեց բազում կրաւնաւորս հնտրակեր եւ բոկագնայ եւ հաստատեց վանք եւ ինքն առանձնանայր ի **Հայոց թառոյ ի յասպ եւ անուանեցաւ Գետոց վանք** [եւ այ]**ժմ ունի զտեղիս զայս սուրբ ուխտն [Հաւուց] թառ»:**

Նաթանայելն ըստ էության ասում է, որ Սահակն ու Մեսրոպը 423-ին հիմնել են Հայոց թառը, ակնարկելով, որ այստեղ նրանք զբաղվել են թարգմանությամբ: Այնուհետեւ 426 թ. Սահակը Գառնիի ձորում, գետի մոտ հիմնել է եկեղեցի (Սուրբ Կաթողիկե), Հայոց թառից տեղափոխվել այստեղ, կրոնավորներ ժողովել ու վանք հիմնել: Տեղն այդ անվանվել է Գետոց վանք, եւ Նաթանայելի ժամանակ այն մաս է կազմել Հավուց թառի ուխտին:

Նշենք, որ մեզ ծանոթ սկզբնաղբյուրներում սա միակ տեղն է, ուր հանդիպում է «Գետոց վանք» անվանումը, որը Նաթանայելն օգտագործում է նաեւ ԺԱ. դարի սկզբի դեպքերի առնչությամբ: Սակայն մինչ այն ներկայացնելը, վկայաբերենք մի հատված Ստեփանոս

Ոսկեբերանի» («ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երեւան, 1950, էջ 351):

43 «Գիրքս Հայոց թառոյ է, որ է աղօթատեղ Սուրբ Լուսաւորչին, եւ հաստակառոյց հաստատեաց եւ հանդիսացոյց տեղի թարգմանութեան... սուրբ Հայրապետն Սահակ եւ սուրբ վարդապետն Մեսրովբ եւ երոյ նորոգեաց սպարապետն Գորք իշխան» (**Գ. Հովսեփյան,** Հավուց Թառի ամենափրկիչը եւ նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ. «Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հ. Բ, Երեւան, 1987, էջ 24):

44 Ղ. Ալիշանը վանքի անվան մասին գրում է. «Անծանօթ է պատճառ անունանս. ոմանց ստոյգ թուի *Հաւուց* ասել՝զի յանկագոյն է զուգորդ *թառ* բառի, այլ հաւանագոյն թուի *Հայոց* լինել» (**Ղ. Ալիշան**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 354):

Օրբելյանի Սյունյաց պատմությունից, որտեղ, մեր կարծիքով, խոսվում է հենց այդ վանքի մասին: Տաթևի վանքի Պողոս-Պետրոս եկեղեցու 906 թ. մեծ հանդեսով տեղի ունեցած օծման ժամանակ ներկա գտնված Հայոց Սմբատ Ա. Բագրատունի (890-914) թագավորը վանքին է նվիրել իրեն պատկանած մի ավան Արևիք գավառում (Մեղրի), մի գյուղ Սոթքում եւ «ի Գառնոյ ձորի զԳոտող վանս»[45]: Ստեփանոս Օրբելյանի պատմությունը թարգմանած Ա. Ա. Աբրահամյանն այս անունը ծանոթագրելով գրում է. «Գառնու ձորի Գոտող (կամ Գոտոզ) վանքը միայն հիշատակվում է այստեղ: Անորոշ է, թե այդտեղի մեզ հայտնի ո՞ր վանքն էր»[46]:

Չենք կարծում, որ Գառնու ձորում երկու վանք կար՝ Գետոց եւ Գոտող անուններով, ավելի հավանական է, որ խոսքը նույն անվան մասին է, որն Օրբելյանի բնագրում ինչ-որ պատճառով եղծվել է[47]:

Հավուց թառի վանքի համալիրն այսօր բաղկացած է իրարից 100, 200 եւ անգամ 500 մետր հեռու գտնվող չորս հուշարձանախմբից[48]: Հնարավոր է, որ դանցից Ազատ գետին ամենից մոտ գտնվածն է Գետոց վանք կոչվել, կամ էլ այժմ նրա հետքերը չեն երեւում: Բայց այն, որ Գետոց վանքն առանձին միավոր է եղել, երեւում է նաեւ Նաթանայել Հավուցթառեցու հաջորդ վկայությունից: Այն 1002 թվականին Քեղի բերդի իշխան Գեւորգի ձեռամբ վանքի պայծառացման, 9 խորանով նոր Կաթողիկե եկեղեցու կառուցման եւ վանքի ստացած մեծարժեք նվիրատվությունների մասին է: «Գէորք իշխանաց իշխանն, որդի Հասանայ, եղբար Ապիրատին[49] վերըստին նորոգեց զնախադրական հոչակաւոր սուրբ ուխտն զՀաւուց թառ եւ շինեց զփառաւոր զհրաշալի Կաթողիկէն Թ (9) խորանաւ: Եւ արար գանձագին զմերձակայ **գեղն զԿոխթ ի Գագիկ շահանշահէ եւ Յովանիսէ** եւ եկ Հաւուց թառոյ Սուրբ Կաթողիկէին հայրենիք, **եւ եկ ի հայրենե(ա)ց իր զԳետոց վանսն, եւ զՀովայսն՝ վանքագեղ** եւ ժողովեց ԳՃ (300) կրաւնաւոր»:

Ինչպես տեսնում ենք, Գեւորգ իշխանը Գագիկ Ա. թագավորից եւ նրա որդի Հովհաննես Սմբատից գնել է Կոխթ (Գոտթ) գյուղը եւ նվիրել նորաշեն Կաթողիկե եկեղեցուն որպես սե-

---

45 **Ստեփանոս Օրբէլեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 229:

46 **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երեւան, 1986, էջ 470: Տեղանունների բառարանը «Գոտողը» համարում է Գոտթ գյուղի հին անունը, որն անհամոզիչ է (**Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ա, Երեւան, 1986, էջ 950): Նաթանայել Հավուցթառեցին Գոտթը հիշատակում է Կոխթ անունով:

47 Վանքի անվան սխալ գրությունը՝ երկրորդ եւ վերջին տառերի եղծված լինելու հետեւանքով, կարող էր առաջանալ երկու տեղում, կամ թագավորական ընծայագրում, որը՝ «գրեալ ի վերայ մագաղաթի» (**Ստեփանոս Օրբէլեան**, էջ 228), Ստեփանոս Օրբելյանի ձեռքն անցնելու ժամանակ արդեն 300 տարվա հնություն ուներ, կամ հենց նրա երկն ընդօրինակողների թերացման պատճառով: Օրբելյանի պատմության մեզ հասած հնագույն ընդօրինակության մեջ (հավանաբար ԺԴ. դար) վանքի անունը «Գոտոզ» է (Մատենադարան, ձեռ. թիվ 6271, թերթ 158բ): Քանի որ այլ ձեռագրերում (որոնց հիման վրա կատարվել են հրատարակությունները) այն «Գոտող» է, թվում է, որ հեղինակային բնագրում անունն իրոք եղծված է եղել, որի պատճառով էլ առաջացել է վերջին տառի տարընթերցումը: Սիմեոն Երեւանցու «Ջամբռում» այն կոչվում է «Կուտուց վանք» (**Սիմեոն կաթողիկոս Երեւանցի**, Ջամբռ, Երեւան, 2003, էջ 387,389):

48 Տե՛ս **Գ. Մարգսյան**, Վիմագրագիտական նորոյթներ. Հաւուց թառ, «Հանդէս ամսօրեայ», 2001, էջ 230:

49 Մինչեւ այս տեղեկության հայտնաբերումը Գեւորգ իշխանի՝ Հավուց թառում կատարածի մասին հայտնի էր միայն Մխիթար Այրիվանեցու վկայությունը. «Շինի եւ Հաւուց թառն ի Գէորգայ իշխանէն Քեղոյ» («Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», էջ 57): Նաթանայելի տեղեկության շնորհիվ հայտնի դարձավ նաեւ Գեւորգի տոհմը. նրա եղբայր Ապիրատը (Գրիգոր Ապիրատ) 1003 թ. կառուցել է Կեչառիսի վանքը եւ եղել ժամանակի ամենաազդեցիկ իշխաններից:

փականություն (հայերնիք), իսկ ի՛ր սեփականությունից («ի հայրենեաց իր») փվել է Գեղոց վանքը, նաեւ Կոտայքի Ոլա գյուղը՝ որպես «վանքագեղ»:

Նաթանայելն այնուհետեւ գրում է Հավուց թառի նշանավոր սրբության՝ Ամենափրկիչ կոչվող փայտյա փոքրագիր խաչի (այժմ պահվում է Ս. Էջմիածնում), «Նոր վկա» Հովսեփ Դվնեցու նահատակության, Հավուց թառում թաղվելու եւ այլ դեպքերի մասին: Սակայն հավելումների շարքում հատուկ ուշադրության է արժանի Նաթանայելի հաղորդումն այն մասին, որ Հայոց ՅԻԶ. (877) թվականին Հայոց Գեորգ Բ. Գառնեցի (877-897) Կաթողիկոսը Հավուց թառը նորոգել եւ իր համար ամառային նստոց է դարձրել. «Սուրբ Հայրապետն եւ մեծ **պատրիարգն Հայոց սուրբն Գէորք վերսփին նորոգեց զնախադրական ուխտն Հաւուց թառ** եւ պայծառացոյց, փարթամացոյց զոյիւք **եւ ա[ռա]ր իրն բնակ[ար]ան յամար[այ]նի ժամանակս**»: Ըստ երեւույթին Արարատյան դաշտի շոգ ամառվա պատճառով այստեղ (Վաղարշապատ, Դվին) աթոռակալող կաթողիկոսները հոգացել են ոչ հեռու գտնվող զով վայրերում ամառային նստոց ունենալու մասին: Հավանաբար այդ նույն դերն է ունեցել Բյուրականը՝ քիչ հետո աթոռակալած Հովհաննես Ե. Դրասխանակերտցու համար, որտեղ նա նաեւ եկեղեցի է կառուցել: Այս համատեքստում անհավանական չէ, որ Սահակ Պարթեւն էլ զով վայրում առանձնանալու եւ թարգմանությամբ զբաղվելու համար, ինչ-որ ժամանակ հաստատված լինի Գառնիի ձորում գտնվող վանքում: Ենթադրությունն ավելի հավանական է թվում, երբ նկատի ենք ունենում, որ Գառնիի ամրոցն այդ ժամանակ Արշակունի թագավորների ամառանոցն էր, եւ տրամաբանական է, որ Կաթողիկոսն էլ մոտիկ վայրում պիտի լիներ:

Վերը շարադրվածից զալիս ենք այն եզրակացության, որ այսուհետեւ Հավուց թառի պատմությանն անդրադառնալիս չպետք է խուսափել վանքի հիմնադրումը Ս. Սահակ Պարթեւին եւ Ս. Մեսրոպ Մաշտոցին վերագրելուց, քանի որ այդ մասին առկա է առնվազն երեք սկզբնաղբյուր՝ ԺԴ. դարի երկու հիշատակարան եւ Նաթանայել Հավուցթառեցու մի քանի վկայությունները, որոնք նա մուծել է Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ: